

րում հայի ճակատագիրը վերջին պատերազմի ընթացքին, բայց՝ «ըստ ամենայնի հասկանալի եւ ըմբռնելի»:

Գերման զինականի այս եւ նման «տեսութիւնների արժան գնահատականը ժամանակին տուել եմ իմ վերոյիշեալ յօդուածում: Չանդրադառնանք այդ խնդրին: Իմ նպատակն էր այստեղ յիշատակել այն փաստը, որ իր մասնազրկութեան՝ մարդարանութեան եւ ազգազրկութեան մէջ անուանի զինականը — պատմութեան եւ քաղաքագիտութեան մէջ պարզ համբակ — իր կողմից ու բոլորովին անկախաբար յայտնում է այն կարծիքը, թէ «հայերի նման բազմածին ժողովուրդ քիչ կայ, իսկ աւելի՛ բազմածին քան հայերը — եւ ոչ մէկը»:

Մեծ եղեռնին զոհ գնացած մէկ միլիոն հայերի զանգուածային կոտորածն էլ ազգազրկաւ հեղինակը եւ հայատեաց զինականը «մարդարանական տեսակէտից» համարում է մի տեսակ «արիւն ատնելու» անհրաժեշտ-

թիւն՝ հայերի նման մի բազմածին ժողովուրդի համար, «որից աղաղակ, շնորհիւ իր անօրինակ բազմազաւակութեան, կարճ ժամանակ յետոյ պիտի նորէն կ'ազգուրուի»: Ու իր ասածները հիմնաւորելու համար նա առաջ է բերում ամբողջական նեղերի օրինակը Վերին Գուինէի ծովեզերքում: Այդ երկիրները, ասում է նա, հակառակ դարեր շարունակ զերիններ արտածելուն ղէպի Ամերիկա, հակառակ նաեւ «մարդկային անհամար զոհաբերութեանց տեղական սովորութեան», այսօր աշխարհիս ամենախիտ բնակչութիւն ունեցող երկիրների թուին են պատկանում, շնորհիւ իրենց ժողովուրդների բազմածնութեան»:

Լա՛ւ միտթարութիւն մեր սրտին... Ի տես մեր հայրենական տերրիտորիայի $\frac{4}{5}$ -ի ամալութեան, հայաթափուր վիճակին: Բայց եւ այնպէս արձանագրենք այս հեղինակաւոր կարծիքն էլ, հայ ցեղի արտակարգ բազմածնութեան մասին:

(Շարունակելի)

ՅԱԿՈՎԷ ԶՈՒՂ ԱՅԵՅԻ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆ)

Գրեց՝ ԻՐԱԶԵԿ

4.

ՊԱԿԱՍ յուսահատական չէր հայութեան նաեւ մտաւոր-մշակոյթային եւ բարոյական վիճակը, մահմեդական տիրապետութեան ներքոյ: Տնտեսականի մասին Վլ չենք խօսում, որովհետեւ դա արեւի լոյսի պէս արդէն պարզ է:

Եւ ի՞նչպէս կարող էր այլ կերպ լինել նրման դժոխային պայմաններում, երբ ամբողջ երկրում մահն ու սարսափն էին թագաւորում եւ թշուառութիւնը կապարի նման ծանրացած էր ամէնքի ուսերին, երբ ամէն մարդ մտահոգուած էր գերազանցապէս միայն եւ միայն իր ֆիզիքական գոյութիւնը պահելու հոգսով: Այդպիսի հանգամանքներում չէ թէ ծաղկել, այլ նոյն իսկ ապրել ու շնչել չէին կարող ո՛չ գիտութիւնը, ո՛չ գիրն ու գրականութիւնը,

ո՛չ բարոյականութիւնը: Նրանք ամէնից առաջ պահանջում են քաղաքական նպաստաւոր պայմաններ, մարդկային գէթ տարրական իրաւունքների ճանաչումն եւ տնտեսական գոնէ տանելի կացութիւն — ապրել կարողանալու համար:

Գաւրիթեցիի ներկայացնում է մեզ մի շարք հոգեւորական գէմքեր, որոնց ընդհանուր պատկերը, վերոյիշեալ յատկութիւնների տեսակէտից, շատ ստոր է: Բայց չբաւականանալով դրանով, նա բազմաթիւ անգամներ դժում է եւ ամբողջ հոգեւորականութեան պատկերը, դրանով կամենալով որոշ գաղափար տալ մեզ նաեւ ժողովրդի մասին: Այդ վկայութիւններից մէկը ասում է. —

«Կաթողիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով եւ կաշառօք ընկաւեալք զաստիճան կաթո-